Արձանագրության 4

Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված «Էրեբունի-Երևան» տոնակատարության շրջանակում մշակութային միջոցառումների իրականացման ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.07.2018թ.
Ժամը՝ 10:20

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Ռ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Է. Թորոսյան, Ծ. Մկրտչյան, Ռ. Մաիլյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Համբարձումյան
Բացակայում էր՝	Ա. Գյուրջյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ռ. Հովհաննիսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ, ինչպես նաև ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «ԷՅՌԻՎԻ ՄԵԴԻԱ ԷՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված չափը:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել առաջին տեղ զբաղեցնող մասնակցի հայտը՝ հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի պահանջները:

Միաժամանակ մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Ռ. Հովհաննիսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «ԻՆՎԻՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ և «ՄԱԵՍՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ Կոնսորցիումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ռ. Հովհաննիսյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով

սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի առկայության վերաբերյալ 18.07.2018թ. հարցում ներկայացնել << կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 18.07.2018թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցը վերոնշված ժամկետում պետք է ներկայացնի նաև հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը՝ համաձայն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի դ. պարբերության:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Հովհաննիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ռ. Հովհաննիսյան

Անդամներ՝ ---------- Է. Թորոսյան

---------- Ծ. Մկրտչյան

---------- Ռ. Մաիլյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան